

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ 2013-2014 Թ.Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՔՐԵԱԿԱՆ ՈԼՈՐՏ

(քրեական գործեր, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող միջնորդություններ)

2014 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է 4021 քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 17297 միջնորդություն (ընդհանուրը՝ $4021+17297=21318$):

Ստացված 4021 քրեական գործից ավարտվել է 2882-ը (71,7%):

Ստացված 17297 միջնորդություններից ավարտվել է 17205-ը (99,5%):

(Ընդհանուր առմամբ ավարտվել է 20087 դատական գործ (2882+17205=20087) 94,2%):

Համեմատության կարգով նշենք, որ 2013 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է 4039 քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 17777 միջնորդություն (ընդհանուրը՝ $4039+17777=21816$):

Ստացված 4039 քրեական գործից ավարտվել է 3204-ը (79,3%):

Ստացված 17777 միջնորդություններից ավարտվել է 17356-ը (97,6%):

(Ընդհանուր առմամբ ավարտվել է 20560 դատական գործ (3204+17356=20560) 94,2%):

2014 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարանների կողմից ավարտված 2882 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 3799 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 2615 գործով (90,7%) կայացվել է դատավճիռ՝ 3511 անձի նկատմամբ, 207 գործով (7,2%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ 228 անձի վերաբերյալ, 60 գործով (2,1%)՝ 60 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ:

Համեմատության կարգով նշենք, որ 2013 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարանների կողմից ավարտված 3204 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 4353 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 2788 գործով (87%) կայացվել է դատավճիռ՝ 3894 անձի նկատմամբ, 370 գործով (11,5%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին

որոշում՝ 413 անձի վերաբերյալ, 46 գործով (1,5%)՝ 46 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ:

2014 թվականի ընթացքում լրիվ կամ մասնակի արդարացվել է 125 (71+54=125) 3,6% (125:3511*100=3,6%) անձ, որից 71-ը (71:3511*100=2%)՝ լրիվ, իսկ 54-ը (54:3511*100=1,6%)՝ մասնակի:

Համեմատության կարգով նշենք, որ 2013 թվականի ընթացքում լրիվ կամ մասնակի արդարացվել է 96 (65+31=96) 2,5% (96:3894*100=2,5%) անձ, որից 65-ը (65:3894*100=1,7%)՝ լրիվ, իսկ 31-ը (31:3894*100=0,8%)՝ մասնակի:

2014 թվականի ընթացքում դատապարտվել է 3440 (3511-71=3440) 98% (3440:3511*100=98%) անձ:

2014 թվականի ընթացքում դատապարտված 3440 անձանցից ազատազրկման ձևով պատիժ է նշանակվել 1775 (51,6%) անձի նկատմամբ:

Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 834 անձի նկատմամբ (834:3440*100=24,2%):

Համեմատության կարգով նշենք, որ 2013 թվականի ընթացքում դատապարտվել է 3829 (3894-65=3829) 98,3% (3829:3894*100=98,3%) անձ:

2013 թվականի ընթացքում դատապարտված 3829 անձանցից ազատազրկման ձևով ռեալ պատիժ է նշանակվել 2179 (57%) անձի նկատմամբ:

Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 818 անձի նկատմամբ (818:3829*100=21,4%):

Այսպիսով, 2014 թվականի ընթացքում՝ 2013 թվականի համեմատությամբ, դատարաններում ստացված քրեական գործերի քանակը նվազել է 18-ով (4039-4021=18) 0,4% (18:4039*100=0,4%), ըստ ավարտված գործերի՝ դատի տրված անձանց թիվը նվազել է 554-ով (4353-3799=554) 12,7% (554:4353*100=12,7%): Անձանց թիվը, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, աճել է 16-ով (834-818=16) 1,9% (16:818*100=1,9%), դատապարտվածների թիվը նվազել է՝ 389-ով (3829-3440=389) 10,1% (389:3829*100=10,1%), իսկ արդարացվածների թիվն աճել է 29-ով (125-96=29) 30,2% (29:96*100=30,2%):

Հարկ է նշել, որ ինչպես 2013 թվականին, այնպես էլ 2014 թվականին դատապարտված անձանց թվում որոշակի նվազումներով հանդերձ զգալի թիվ են կազմել գողության, խարդախության, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, ինչպես նաև զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններից՝ պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու համար դատապարտվածները:

Այսպես.

- 2013 թվականի ընթացքում գողության համար (ՀՀ քր. օր. 177-րդ հոդված) դատապարտվել է 499 անձ (դատապարտվածների թվի 13%-ը, $499:3829*100=13\%$), խարդախության համար (ՀՀ քր. օր. 178-րդ հոդված)՝ 145 անձ (դատապարտվածների թվի 3,8%-ը, $145:3829*100=3,8\%$), պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու համար (ՀՀ քր. օր. 358-րդ հոդված)՝ 95 անձ (դատապարտվածների թվի 2,5%-ը, $95:3829*100=2,5\%$), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար (ՀՀ քր. օր. 112-րդ հոդված)՝ 117 անձ (դատապարտվածների թվի 3,1%-ը, $117:3829*100=3,1\%$):

- 2014 թվականի ընթացքում գողության համար (ՀՀ քր. օր. 177-րդ հոդված) դատապարտվել է 468 անձ (դատապարտվածների թվի 13,6%-ը, $468:3440*100=13,6\%$), խարդախության համար (ՀՀ քր. օր. 178-րդ հոդված)՝ 115 անձ (դատապարտվածների թվի 3,3%-ը, $115:3440*100=3,3\%$), պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու համար (ՀՀ քր. օր. 358-րդ հոդված)՝ 110 անձ (դատապարտվածների թվի 3,2%-ը, $110:3440*100=3,2\%$), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար (ՀՀ քր. օր. 112-րդ հոդված)՝ 106 անձ (դատապարտվածների թվի 3,1%-ը, $106:3440*100=3,1\%$):

Այսպիսով, 2014 թվականի ընթացքում՝ 2013 թվականի համեմատությամբ, գողության համար դատապարտվածների թիվը նվազել է 31-ով ($499-468=31$) 6,2% ($31:499*100=6,2\%$), խարդախության համար դատապարտվածների թիվը նվազել է 30-ով ($145-115=30$) 20,7% ($30:145*100=20,7\%$), պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու համար դատապարտվածների թիվն աճել է 15-ով ($110-95=15$) 15,8% ($15:95*100=15,8\%$), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար դատապարտվածների թիվը նվազել է 11-ով ($117-106=11$) 9,4% ($11:117*100=9,4\%$):

Ի դեպ, զգալի նվազում է արձանագրվել նաև համեմատվող ժամանակահատվածում դիտարկված ներքոհիշյալ հանցագործությունների համար դատապարտվածների թվում:

Այսպես.

- Խուլիգանության համար (ՀՀ քր. օր. 258-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 178 անձ, իսկ 2014 թվականին՝ 133, նվազումը՝ 45 ($178-133=45$) անձ (25,3%): Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ հիշյալ հոդվածով 2012 թվականին դատապարտվել է 299 անձ:

- Զինձառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում խախտելու համար (ՀՀ քր. օր. 359-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 300 անձ, իսկ 2014 թվականին՝ 238, նվազումը՝ 62 ($300-238=62$) անձ (20,7%):

-Առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության համար (ՀՀ քր. օր. 268-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 322 անձ, իսկ 2014 թվականին՝ 272, նվազումը՝ 50 ($322-272=50$) անձ (15.5%):

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հիշյալ հոդվածով 2012 թվականին դատապարտվել է 408 անձ:

-Իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության համար (ՀՀ քր. օր. 375-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 101 անձ, իսկ 2014 թվականին՝ 37, նվազումը՝ 64 ($101-37=64$) անձ (63,4%):

Հիշյալ հանցագործության թվի ներկայացումը հատկանշական է այն առումով, որ 2013 թվականին այս հանցագործության կատարման զգալի աճ էր նկատվել, մասնավորապես՝ 2012 թվականին դատապարտվել է 79 անձ, իսկ 2013 թվականին՝ 101, աճը՝ 22 ($101-79=22$) անձ (28%):

- Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու համար (ՀՀ քր. օր. 316-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 38 անձ, իսկ 2014 թվականին՝ 29, նվազումը՝ 9 ($38-29=9$) անձ (23,7%):

-Ավագակության համար (ՀՀ քր. օր. 175-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 44 անձ, իսկ 2014 թվականին՝ 32, նվազումը՝ 12 ($44-32=12$) անձ (27,3%):

Հիշյալ հանցագործության թվի ներկայացումը հատկանշական է այն առումով, որ 2013 թվականին այս հանցագործության կատարման զգալի աճ էր նկատվել, մասնավորապես՝ 2012 թվականին դատապարտվել է 37 անձ, իսկ 2013 թվականին՝ 44, աճը՝ 7 ($44-37=7$) անձ (19%):

- Շորթման համար (ՀՀ քր. օր. 182-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 18 անձ, իսկ 2014 թվականին՝ 12, նվազումը՝ 6 ($18-12=6$) անձ (33,3%):

- Մարդուն առևանգելու համար (ՀՀ քր. օր. 131-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 86 անձ, իսկ 2014 թվականին՝ 53, նվազումը՝ 33 ($86-53=33$) անձ (38,4%):

- Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու համար (ՀՀ քր. օր. 325-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 69 անձ, իսկ 2014 թվականին՝ 27, նվազումը՝ 42 ($69-27=42$) անձ (60,9%):

Հիշյալ հանցագործության թվի ներկայացումը հատկանշական է այն առումով, որ 2013 թվականին այս հանցագործության կատարման զգալի աճ էր նկատվել, մասնավորապես՝ 2012 թվականին դատապարտվել է 46 անձ, իսկ 2013 թվականին՝ 69, աճը՝ 23 ($69-46=23$) անձ (50%):

- Կողոպուտի համար (ՀՀ քր. օր. 176-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 62 անձ, իսկ 2014 թվականին՝ 51, նվազումը՝ 11 ($62-51=11$) անձ (17,7%):

- Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրականացման կամ դրանց ապօրինի իրացման համար (ՀՀ քր. օր. 266-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 107 անձ, իսկ 2014 թվականին՝ 65, նվազումը՝ 42 (107-65=42) անձ (39,2%):

Միաժամանակ, աճ է արձանագրվել ստորև ներկայացվող՝ դիտարկված հանցագործությունների համար դատապարտվածների թվում:

Այսպես.

- Սպանության համար (ՀՀ քր. օր. 104-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 32 անձ, իսկ 2014 թվականին՝ 38, աճը՝ 6 (38-32=6) անձ (18,7%):

- Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու համար (ՀՀ քր. օր. 116-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 2 անձ, իսկ 2014 թվականին՝ 6, աճը՝ 4 (6-2=4) անձ (200%):

- Ծեծի համար (ՀՀ քր. օր. 118-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 29 անձ, իսկ 2014 թվականին՝ 44, աճը՝ 15 (44-29=15) անձ (51,7%):

-Մուտ մատնության համար (ՀՀ քր. օր. 333-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 44 անձ, իսկ 2014 թվականին՝ 47, աճը՝ 3 (47-44=3) անձ (6,8%):

- Սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու համար (ՀՀ քր. օր. 141-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 27 անձ, իսկ 2014 թվականին՝ 34, աճը՝ 7 (34-27=7) անձ (25,9%):

-Մաքսանենգության համար (ՀՀ քր. օր. 215-րդ հոդված) 2013 թվականին դատապարտվել է 27 անձ, իսկ 2014 թվականին՝ 47, աճը՝ 20 (47-27=20) անձ (74%):

2014 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացված վերոհիշյալ 17297 միջնորդություններից 15163 (87,7%-ը) վերաբերվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 2331-ը (15,4%) (2331:15163*100=15,4%) հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Նշվածից 2203-ը (94,5%) (2203:2331*100=94,5%) բավարարվել է, 122-ը (5,2%) (122:2331*100=5,2%) մերժվել, իսկ 6-ը (0,3%) (6:2331*100=0,3%) թողնվել է առանց քննության: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 572 միջնորդություն, որից 99-ը (17,3%) բավարարվել է, 462-ը (80,8%)՝ մերժվել, 9-ը (1,6%)՝ թողնվել է առանց քննության, իսկ 2-ը (0,3%)՝ 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ 2013 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացված վերոհիշյալ 17777 միջնորդություններից 14530-ը (81,7%)

վերաբերվել է մինչդաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 3172-ը (21,8%) ($3172:14530*100=21,8\%$) հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Նշվածից 3011-ը (94,9%) ($3011:3172*100=94,9\%$) բավարարվել է, 153-ը (4,8%) ($153:3172*100=4,8\%$) մերժվել, իսկ 8-ը (0,25%) ($8:3172*100=0,25\%$) թողնվել է առանց քննության: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 576 միջնորդություն, որից 129-ը (22,4%) բավարարվել է, 427-ը (74,1%)՝ մերժվել, 16-ը (2,8%)՝ թողնվել է առանց քննության, իսկ 4-ը (0,7%)՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Այսպիսով, 2014 թվականին ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացված միջնորդությունների թիվը նվազել է 480-ով (2,7%), կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունների թիվը նվազել 841-ով (26,5%):

ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2014 թվականի ընթացքում ստացվել է 2850 վերաքննիչ բողոք՝ 2563 դատական ակտի դեմ (*այսինքն՝ բողոքարկվել է առաջին ատյանի դատարանների կողմից կայացված դատական ակտերի ընդամենը 12,7%-ը* ($2563:20087*100=12,7\%$)): Բերված բողոքներից 1405-ով (49,3%) բողոքարկվել է քրեական գործերով կայացված գործն ըստ էության լուծող 1156 դատական ակտ, իսկ մնացած՝ 1445-ով (50,7%) բողոքարկվել է մինչդաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 1407 դատական ակտ:

Քրեական գործերով բողոքարկված 1156 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1033-ով (89,3%), այդ թվում՝ 706 (68,3%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 264-ը (25,5%)՝ բեկանվել է, 29-ը (2,8%) թողնվել է առանց քննության, 34-ով (3,4%) վերաքննիչ վարույթը կարճվել է: Բեկանված 264 ակտերից 42-ով (15,9%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության, 222-ով (84,1%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 1407 դատական ակտերի դեմ բերված 1445 բողոքներից բավարարվել է 137-ը (բեկանվել է 146 դատական ակտ, որից 9 դատական ակտի դեմ բողոքները բերված են եղել 2013 թվականին) (9,5%), մերժվել՝ 1165-ը (80,6%), 20-ը (1,4%) թողնվել է առանց քննության, 43-ով (3%) վերաքննիչ

վարույթը կարճվել է, իսկ 80-ը (40 դատական ակտի դեմ) (5,5%)՝ 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել են անավարտ:

Բողոքարկված 2563 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 2850 բողոքներից 785-ը (27,5%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 79 (10%) բողոքի քննություն 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացքը լուծված 706 (785-79=706) բողոքներից 143-ը (20,3%) բավարարվել է, 552-ը (78,2%)՝ մերժվել, 7-ով (0,9%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 4-ով (0,6%)՝ բողոքը թողնվել է առանց քննության:

*Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2013 թվականի ընթացքում ստացվել է 2766 վերաքննիչ բողոք՝ 2461 դատական ակտի դեմ (այսինքն՝ բողոքարկվել է առաջին ատյանի դատարանների կողմից կայացված դատական ակտերի ընդամենը 12%-ը (2461:20560*100=12%)): Բերված բողոքներից 1552-ով (56,1%) բողոքարկվել է քրեական գործերով կայացված գործն ըստ էության լուծող 1247 դատական ակտ, իսկ մնացած՝ 1214-ով (43,9%) բողոքարկվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 1214 դատական ակտ:*

Քրեական գործերով բողոքարկված 1247 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1161-ով (93,1%), այդ թվում՝ 769 (66,2%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 286-ը (24,6%)՝ բեկանվել է, 46-ը (4%) թողնվել է առանց քննության, 60-ով (5,2%) վերաքննիչ վարույթը կարճվել է: Բեկանված 286 ակտերից 38-ով (13,3%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության, 248-ով (86,7%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող դատական ակտերի դեմ բերված 1214 բողոքներից բավարարվել է 114-ը (9,3%), մերժվել՝ 1022-ը (84,2%), 24-ը (2%) թողնվել է առանց քննության, 31-ով (2,5%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 23-ը (2%)՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել են անավարտ:

Բողոքարկված 2461 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 2766 բողոքներից 510-ը (18,4%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 50 (9,8%) բողոքի քննություն 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացքը լուծված 460 (510-50=460) բողոքներից 104-ը (22,6%) բավարարվել է, 336-ը (73%)՝ մերժվել, 14-ով (3,1%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 6-ով (1,3%)՝ բողոքը թողնվել է առանց քննության:

*Այսպիսով, 2014 թվականի ընթացքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում ստացված բողոքների ընդհանուր թիվն աճել է 84-ով (2850-2766=84) 3% (84:2766*100=3,04%), այդ թվում՝ քրեական գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների թիվը նվազել է 147-ով (1552-1405=147) 9,5% (147:1552*100=9,5%), մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության*

ուղորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող դատական ակտերի դեմ բերված բողոքների թիվն աճել է 231-ով ($1445-1214=231$) 19% ($231:1214*100=19\%$):

Քրեական գործերով ավարտված վերաքննիչ վարույթների թիվը նվազել է 128-ով ($1161-1033=128$) 11.1%, անփոփոխ թողնված դատական ակտերի թիվը նվազել է 63-ով ($769-706=63$) 8,2%, իսկ բեկանվածների թիվը նվազել է 22-ով ($286-264=22$) 7,7%:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ուղորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող դատական ակտերի դեմ բերված բողոքներից բավարարվածների թիվն աճել է 23-ով ($137-114=23$) 20,1%, մերժվածների թիվն աճել է՝ 143-ով ($1165-1022=143$) 14%, առանց քննության թողնվածների թիվը նվազել է 4-ով ($24-20=4$) 16.7%, վերաքննիչ վարույթի կարճումների թիվն աճել է 12-ով ($43-31=12$) 38,7%:

Այսպիսով, բերված բողոքների ընդհանուր թիվն աճել է 84-ով ($2850-2766=84$) 3%, ավարտված վերաքննիչ վարույթների արդյունքում բավարարված բողոքների ընդհանուր թիվն աճել է 1-ով ($(264+137=401)-(286+114=400)=1$), իսկ մերժվածների թիվը՝ 80-ով ($(706+1165=1871)-(769+1022=1791)=80$) 4,5%:

Դատախազության կողմից բերված բողոքների ընդհանուր թիվն աճել է 275-ով ($785-510=275$) 54% ($275:510*100=54\%$), այդ թվում՝ ավարտված վերաքննիչ վարույթների արդյունքում բավարարված բողոքների թիվն աճել է 39-ով ($143-104=39$) 37,5%, իսկ մերժվածների թիվը՝ 216-ով ($552-336=216$) 64,3%:

*Այսպիսով, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2014 թվականի ընթացքում ավարտված գործերով կայացված 20087 ($2882+17205=20087$) դատական ակտերից բողոքարկվել է 2563-ը՝ 12,7% ($2563:20087*100=12,7\%$), որից բեկանվել է 403-ը ($264+146-7=403$) 15,7% / $410-7=403$, նշված 7 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացված թվով 7 դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտերին օրինական ուժ տալու դեպքերին), այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2014 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 98% ($20087-403=19684:20087*100=98\%$), իսկ բողոքարկված գործերի կայունությունը կազմում է 84,3% ($2563-403=2160:2563*100=84,3\%$):*

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶՐԵԱԿԱՆ ՊԱՍԼԱՏ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2014 թվականի ընթացքում ստացվել է 1250 (ստացված 1150+100 փոխանցված) վճռաբեկ բողոք, որոնցով բողոքարկվել է 965 դատական ակտ:

Բերված 1250 բողոքներից 523-ը (41,8%) վերադարձվել է, 77-ն (6,2%) ընդունվել է վարույթ, 144-ը (11,5%)՝ թողնվել է առանց քննության, 3-ը (0,3%) դիտվել է որպես դիմում, 134-ով (10,7 %) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, 2-ով (0,2%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 189-ը (15,1 %) վերադարձվել է ժամկետով, 178 (14,2%) բողոքի ընթացքը 2013 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 77 բողոքներից՝

- 14-ը (վարույթ ընդունվածի 18,2%, ընդհանուր բողոքների 1,2%) մերժվել է,

-20-ը (վարույթ ընդունվածի 26%, ընդհանուր բողոքների 1,6%) բավարարվել է ամբողջությամբ,

-35-ը (վարույթ ընդունվածի 45,4%, ընդհանուր բողոքների 2,8 %)՝ բավարարվել է մասնակի,

- 8-ի ընթացքը (վարույթ ընդունվածի 10,4%, ընդհանուր բողոքների 0,6%) ընթացքը 2013 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 20 բողոքներից 7-ով բեկանվել է վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

- Բերված 1250 բողոքներից 174-ը (13,9%.) ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից, որից 34-ն (19,5%) ընդունվել է վարույթ, 78-ը (44,8%) վերադարձվել է, 7-ը (4,1%) թողնվել է առանց քննության, 10-ը (5,7%) վերադարձվել է ժամկետով, 23-ով (13,2%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 22-ի (12,7%) ընթացքը 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 34 բողոքներից 11-ը բավարարվել է ամբողջությամբ, 13-ը բավարարվել է մասնակի, 7-ը մերժվել է, իսկ 3-ի ընթացքը 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

- Բերված 1250 բողոքներից 1076-ը (86,1%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 43-ն (4%) ընդունվել է վարույթ, 445-ը (41,4%) վերադարձվել է, 137-ը (12,7%) թողնվել է առանց քննության, 3-ը (0,3%) դիտվել է որպես դիմում, 2-ով (0,2%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 179-ը (16,6%) վերադարձվել է ժամկետով, 111-ով (10,3%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 156-ի (14,5%) ընթացքը 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 43 բողոքներից 9-ը բավարարվել է ամբողջությամբ, 22-ը բավարարվել է մասնակի, 7-ը մերժվել է, իսկ 5-ի ընթացքը 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2013 թվականի ընթացքում ստացվել է 1253 վճռաբեկ բողոք, որոնցով բողոքարկվել է 1082 դատական ակտ:

Բերված 1253 բողոքներից 1045-ը (83,4%) վերադարձվել է՝ 921 որոշմամբ, 62-ն (5%) ընդունվել է վարույթ, 44-ը (3,5%)՝ թողնվել է առանց քննության, 2-ը դիտվել է որպես դիմում, 100 (8%) բողոքի ընթացքը 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 62 բողոքներից՝

- 7-ը (վարույթ ընդունվածի 11,3%, ընդհանուր բողոքների 0,56%) մերժվել է,

- 23-ը (վարույթ ընդունվածի 37,1%, ընդհանուր բողոքների 1,84%) բավարարվել է ամբողջությամբ,

- 29-ը (վարույթ ընդունվածի 46,8%, ընդհանուր բողոքների 2,32 %)՝ բավարարվել է մասնակի,

- 3-ի ընթացքը (վարույթ ընդունվածի 4,8%, ընդհանուր բողոքների 0,25%) ընթացքը 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 23 բողոքներից 7-ով բեկանվել է վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

- Բերված 1253 բողոքներից 154-ը (12,3%.) ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից, որից 23-ն (14,9%) ընդունվել է վարույթ, 121-ը (78,6%) վերադարձվել է, իսկ 10-ի (6,5%) ընթացքը 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 23 բողոքներից 15-ը բավարարվել է ամբողջությամբ, 4-ը բավարարվել է մասնակի, 4-ը մերժվել է:

- Բերված 1253 բողոքներից 1099-ը (87,7%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 39-ն (3,5%) ընդունվել է վարույթ, 924-ը (84,1%) վերադարձվել է, 44-ը (4%) թողնվել է առանց քննության, 2-ը դիտվել է որպես դիմում, իսկ 90-ի (8,2%) ընթացքը 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 39 բողոքներից 8-ը բավարարվել է ամբողջությամբ, 25-ը բավարարվել է մասնակի, 3-ը մերժվել է, իսկ 3-ի ընթացքը 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Այսպիսով, 2014 թվականի ընթացքում՝ 2013 թվականի համեմատությամբ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում ստացված ընդհանուր բողոքների քանակը նվազել է 3-ով (1253-1250=3) 0,2%, բողոքարկված դատական ակտերի թիվը՝ 117-ով (1082-965=117) 10,8%, վերադարձված բողոքների քանակը՝ 522-ով (1045-523=522) 49,9%: Վարույթ ընդունված բողոքների թիվն աճել է 15-ով (77-62=15) 24,2%, մերժված բողոքների թիվը՝ 7-ով (14-7=7) 100%, ամբողջությամբ բավարարվածների թիվը նվազել է 3-ով (23-20=3) 13%, իսկ մասնակի բավարարվածների թիվն աճել է 6-ով (35-29=6) 20,7%:

Դատախազության կողմից բերված բողոքների թիվն աճել է 20-ով ($174-154=20$) 13%, վերադարձված բողոքների թիվը նվազել է 43-ով ($121-78=43$) 35,5%, մերժվածների թիվն աճել է 3-ով ($7-4=3$) 75%, ամբողջությամբ բավարարվածների թիվը նվազել է 4-ով ($15-11=4$) 26,7%, իսկ մասնակի բավարարվածների թիվն աճել է՝ 9-ով ($13-4=9$) 225%:

Դատավարության այլ մասնակիցների կողմից բերված բողոքների թիվը նվազել է 23-ով ($1099-1076=23$) 2,1%: Դատավարության այլ մասնակիցների կողմից բերված բողոքներից վերադարձված բողոքների թիվը նվազել է 479-ով ($924-445=479$) 51,8%, մերժվածների թիվն աճել է 4-ով ($7-3=4$) 133,3%, ամբողջությամբ բավարարվածների թիվն աճել է 1-ով ($9-8=1$) 12,5%, մասնակի բավարարվածների թիվը նվազել է 3-ով ($25-22=3$) 12%:

*Այսպիսով, չ՛հ վերաքննիչ քրեական դատարանում 2014 թվականի ընթացքում ավարտված գործերով կայացված 2400 ($1033+1407-40=2400$) դատական ակտերից վճռաբեկության կարգով բողոքարկվել է 965-ը (40.2%), որոնցից բեկանվել է 55-ը ($20+35=55$) 5,7%, այսինքն՝ չ՛հ քրեական վերաքննիչ դատարանում 2014 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 97,7% ($2400-55=2345:2400*100=97,7%$), իսկ բողոքարկված դատական ակտերի կայունությունը կազմում է 94,3% ($965-55=910:965*100=94,3%$):*

*Այսպիսով, քրեական գործերով և միջնորդություններով ընդհանուր կայունությունը կազմում է 97,7% (Քայլ 1-ին՝ չ՛հ քրեական վերաքննիչ դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թիվը՝ 403-ը ($410-7=403$, նշված 7 թիվը կազմում է չ՛հ վճռաբեկ դատարանի կողմից չ՛հ վերաքննիչ քրեական դատարանի 7 դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտերին օրինական ուժ տալու դեպքերին), գումարվել է չ՛հ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից բեկանված դատական ակտերի թվին՝ 55-ին, ստացվել է 458 բեկանված դատական ակտ: Քայլ 2-րդ՝ ընդհանուր իրավասության դատարաններում ավարտված դատական ակտերի թվից՝ 20087-ից, հանվել է բեկանված դատական ակտերի թիվը՝ 458-ը, ստացվել է 19629, այսինքն՝ 19629 դատական ակտ մնացել է օրինական ուժի մեջ, ուստի դատական ակտերի ընդհանուր կայունությունը կազմում է 97,7% / $20087-458=19629:20087*100=97,7%$):*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՈՒԱԶԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2014 թվականի ընթացքում չ՛հ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել է 85772 քաղաքացիական գործ, որից՝

- 5112 գործով /6%/ հայցադիմումը վերադարձվել է,

- 248 գործով /0,3%/ հայցադիմումի ընդունումը մերժվել է,
- 80412 /93,7%/ գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Վարույթ ընդունված 80412 գործերից`

- 46828-ով /58,2%/ կայացվել են վճիռներ, այդ թվում` հայցի լրիվ բավարարմամբ` 35493-ը /վճիռների 75,8%/, հայցի մասնակի բավարարմամբ` 3442-ը /վճիռների 7,3%/, հայցի մերժմամբ` 2654-ը /վճիռների 5,7%/, վարույթի կարճմամբ` 5239-ը /վճիռների 11,2%/, ընդ որում` կարճված վճիռներից 1003-ով /վճիռների 2,1%/ հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,

(ընդհանուր առմամբ կայացվել է 52224 դատական ակտ` 5112+248+46828+36),

- 36 հայց թողնվել է առանց քննության,
- 312 գործ ուղարկվել է ըստ ընդդատության, 76 գործ միացվել է մեկ վարույթում,
- 33160-ը` /վարույթ ընդունված գործերի 41,2%/ անավարտ է:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2013 թվականի ընթացքում ստացվել է 48540 քաղաքացիական գործ, որից`

- 4152 գործով /8,6%/ հայցադիմումը վերադարձվել է,
- 269 գործով /0,5%/ հայցադիմումի ընդունումը մերժվել է,
- 44119 /90,9%/ գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Վարույթ ընդունված 44119 գործերից`

- 28222-ով /64%/ կայացվել են վճիռներ, այդ թվում` հայցի լրիվ բավարարմամբ` 17599-ը /վճիռների 62,3%/, հայցի մասնակի բավարարմամբ` 2493-ը /վճիռների 8,8%/, հայցի մերժմամբ` 2819-ը /վճիռների 10%/, վարույթի կարճմամբ` 5311-ը /վճիռների 18,9%/, ընդ որում` կարճված վճիռներից 911-ով /վճիռների 3,2%/ հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,

(ընդհանուր առմամբ կայացվել է 32687 դատական ակտ` 4152+269+28222+44),

- 44 հայց թողնվել է առանց քննության,
- 207 գործ ուղարկվել է ըստ ընդդատության, 203 գործ միացվել է մեկ վարույթում,
- 15443-ը` /վարույթ ընդունված գործերի 35%/ անավարտ է:

Այսպիսով, 2014 թվականի ընթացքում առաջին ատյանի դատարաններում քաղաքացիական գործերի թիվն ավելացել է 37232-ով /85772-48540=37232/` 76,7%-ով /37232:48540*100=76,7%/: Հայցադիմումի ընդունումը մերժելու որոշումների թիվը նվազել է 21-ով /269-248=21/` մոտ 7,8%: Վերադարձված հայցադիմումների թիվն ավելացել է 960-ով /5112-4152=960/` մոտ 23,1%:

Այսպիսով, 2014 թվականի ընթացքում կայացված 46828 վճիռներով կողմերի միջև հաշտության համաձայնություն է կնքվել 1003-ով` 2,1%-ով, այսինքն` մոտ 46

քաղաքացիական գործից 1-ն ավարտվել է հաշտության համաձայնությամբ, 2013 թվականի ընթացքում կայացված 28222 դատական ակտերով կողմերի միջև հաշտության համաձայնություն է կնքվել 911-ով՝ 3,2%, այսինքն՝ կողմերի միջև հաշտության համաձայնությունները նվազել են:

ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՉԱԿԵԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐ

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2014 թվականի ընթացքում ստացվել է 66981 վճարման կարգադրություն արձակելու դիմում, մինչդեռ 2013 թվականի ընթացքում ստացվել է 58176 վճարման կարգադրություն արձակելու դիմում: Այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2014 թվականին ստացված վճարման կարգադրությունների թիվն աճել է 8805-ով (66981-58176=8805) 15.1%:

ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2014 թվականի ընթացքում ստացվել է 4358 սնանկության վերաբերյալ դիմում, մինչդեռ 2013 թվականի ընթացքում՝ 3376 դիմում: Այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2014 թվականին ստացված սնանկության վերաբերյալ դիմումների թիվն ավելացել է 982-ով (4358-3376=982) 29,1%:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2014 թվականի ընթացքում ՀՀ վարչական դատարանում ստացվել է 16897 գործ, որից՝
- 1025 գործով /6,1%/ հայցադիմումը վերադարձվել է,
- 745 գործով /4,4%/ հայցադիմումի ընդունումը մերժվել է,
- 15127 գործ /89,5%/ ընդունվել է վարույթ:
Վարույթ ընդունված 15127 գործերից՝
- 10747-ով /71,1% կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 4122-ը /վճիռների 38,4%/, հայցի մասնակի բավարարմամբ՝ 1827-ը /վճիռների 17%/, հայցի մերժմամբ՝ 1912-ը /վճիռների 17,8%/, վարույթի կարճմամբ՝ 2886-ը /վճիռների 26,8%/,
(ընդհանուր առմամբ կայացվել է 12517 դատական ակտ՝ 1025+745+10747).

- 4380-ը՝ /ստացված գործերի 25,9%, վարույթ ընդունված գործերի 28,9%/ անավարտ է:

